



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ**

---

15 ապրիլ 2011թ.

թիվ 24-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ  
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՄԱՐԶԻ (ՏԱՐԱԾՔԻ) ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի մարզի (տարածքի)» ամփոփ տեղեկագիրը՝ համաձայն հավելվածի:

## Ցուցումներ մարզի (տարածաշրջանի) ամփոփ

### տեղեկագիրը լրացնելու վերաբերյալ

1. Մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 9) լրացնում է մարզային (տարածքային) գործակալության (բաժնի) պետը (պատասխանատու անձը)՝ մարդահամարի տեղամասի վարիչներից մարդահամարի նյութերը ստանալուց հետո:

Եթե մարզի (տարածաշրջանի) մեջ մտնում են և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներ, ապա լրացվում են երկու ամփոփ տեղեկագրեր՝ մեկը քաղաքի, մյուսը՝ գյուղական վայերերի համար:

2. Մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագրում տեղեկությունները լրացվում են ըստ յուրաքանչյուր քաղաքային կամ գյուղական համայնքի:

3. Եթե քաղաքային կամ գյուղական համայնքը բաժանված է երկու և ավելի մարդահամարի տեղամասերի, ապա սկզբում գրառվում են տվյալ համայնքի յուրաքանչյուր մարդահամարի տեղամասի հանրագումարները՝ ըստ համարների հաջորդականության, այնուհետև՝ տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի հանրագումարներն ամբողջությամբ:

4. Եթե մարդահամարի տեղամասի մեջ ներառված են մի քանի քաղաքային կամ գյուղական համայնքներ, ապա սկզբում լրացվում են քաղաքային կամ գյուղական համայնքի վերաբերյալ հանրագումարները, այնուհետև՝ մարդահամարի տեղամասի հանրագումարները:

5. Եթե քաղաքային համայնքին ենթարկվում են գյուղական բնակավայր(եր), ապա այդ բնակավայր(եր)ի հանրագումարները պետք է մտցվեն գյուղական վայրի ամփոփ տեղեկագրում:

Այդպիսի դեպքերի համար կատարվում է համապատասխան գրառում՝ քաղաքի համար կազմված ամփոփ տեղեկագրի առաջին էջի **«Ծանոթություն»** տողում:

6. Մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 9**) կազմվում է մարդահամարի տեղամասերի (**Ձև թիվ 8**) ամփոփ տեղեկագրերից համապատասխան տվյալները դուրս գրելով, ընդ որում **Ձև թիվ 9**-ի՝ «Հաշվառված է հաշվարարների կողմից» 1-ին բաժնում պետք է գրառվեն **Ձև թիվ 8**-ի 1-ին բաժնի տվյալները, իսկ 2-րդ բաժնում՝ «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» **Ձև թիվ 8**-ի 2-րդ բաժնի տվյալները:

7. Օղանավակայաններում և սահմանային անցման կետերում մարդահամարի հաշվառման հանրագումարները լրացվում են այն բնակավայրերի հանրագումարներում, որի տարածքում դրանք գտնվում են:

8. Մարզի (տարածաշրջանի) ամփոփ տեղեկագրի «Վերահսկիչ շրջագայության արդյունքների ամփոփագիր» բաժինը լրացվում է մարդահամարի տեղամասերի ամփոփ տեղեկագրի համապատասխան տվյալներն ամփոփելով:

9. Մարդահամարի հարցաթերթերում հաշվեգրված բնակչության ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալները 10-րդ սյունակի «Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» տողում պետք է հավասար լինի՝ 10-րդ սյունակի «Ընդամենը հաշվառված է հաշվարարների կողմից» տողի տվյալներին գումարած «Վերահսկիչ շրջագայության արդյունքների ամփոփագիր» բաժնի 1-ին սյունակում «բաց թողնվածների» ընդհանուր թվաքանակի և հանած նույն ամփոփագրի 4-րդ սյունակի «սխալմամբ գրանցվածների» ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալները:

10. Կազմված հսկիչ թերթերի, վերահսկիչ փասաթղթերի, ուղեկցող թերթերի և բնակչությանը տրված տեղեկանքների ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները ստացվում են **Ձև թիվ 8**-ի համապատասխան տվյալներն ամփոփելով:

11. Համոզվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային (տարածքային) գործակալության (բաժնի) պետը (պատասխանատու անձը) գրում է ամսաթիվը և ստորագրում այն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության

2011 թվականի մարդահամար

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության

վիճակագրության պետական խորհրդի

2011 թվականի ապրիլի 15- ի թիվ 24- Ա որոշման

քաղաքային

**Ձև թիվ 9**-----*(որը պետք չէ, ջնջել)*

գյուղական

Մարզում (տարածաշրջանում) ներառված  
մարդահամարի տեղամասերի քանակը

## Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

### ՄԱՐԶԻ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ)

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաք-----Վարչական շրջան-----

### ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում բաց է թողնվել (մարդ)	Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում սխալմամբ գրանցվել է (մարդ)				
	այդ թվում՝		այդ թվում՝		
Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ	Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>

### Ընդամենը կազմվել են (քանակը)

Հսկիչ թերթ (Ձև թիվ 4)-----

Վերահսկիչ փաստաթուղթ (Ձև թիվ 6)-----

Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Բնակչությանը տրվել է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև թիվ 5)-----

Ծանոթություն-----

-----

**ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԻ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ)**

Մարդահամարի տեղամասի համարը	Քաղաքի կամ գյուղական համայնքի անվանումը	Հրահանգչական տեղամասերի քանակը	Հաշվային տեղամասերի քանակը	Ամփոփ տեղեկագրի թերթերի քանակը		Լրացված մարդահամարի հարցաթերթերի քանակը	Դրանցում գրառվել են								
				2և թիվ 6	2և թիվ 7		տղամարդ	կին	ընդամենը	այդ թվում՝					
										Ժամանակավոր ներկաներ			բացակայողներ		
										տղամարդ	կին	ընդամենը	տղամարդ	կին	ընդամենը
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	16.

**1. ՀԱՇՎԱՌՎԱԾ Է ՀԱՇՎԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

Ընդամենը հաշվառված է հաշվարարի կողմից																

**2. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱԳԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը																